## Արձանագրություն N 3

«ԱՐԲԿ-ԷԱՃԱՊՁԲ- 19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնման ընթացակարգի մրցույթի հանձնաժողովի գնահատման նիստի

Դեղորայք և պատվաստանյութեր

ք. Արթիկ «31» «Հունվարի» 2019թ.

ժամը 11:00

Քանի որ հանձանաժողովի նախագահ Տիրուհի Ղուկասյանը գտնվում է անաշխատունակության մեջ, ուստի ՀՀ Կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N 526-Ն <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 26-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ նիստը կնախագահի ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդ թեկնածուն:

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահին փոխարինող՝ Մարինե Խաչատրյան

հանձնաժողովի անդամ՝ Նարինա Վարդանյան

հանձնաժողովի քարտուղար՝ Սաթենիկ Շախպազյան

### I.Հանձնաժողովի նիստի օրակարգը

(Մ. Խաչատրյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1.Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին,
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

### II. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին

(Մ. Խաչատրյան)

Ընդունել ի գիտություն, որ հունվարի 18 -ին ՀՀ Ֆինանսների նախարարություն հարցում է ուղարկվել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

3 աշխատանքային օրվա ընթացքում կոմիտեից տեղեկատվություն չստացվեց: ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման 44-րդ կետի համաձայն՝ սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

ԱՐԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացվել սույն ընթացակարգին իրենց՝ որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկետում հանձնաժողովին ներկայացված սույն ընթացակարգին իրենց՝ որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները), համապատասխանում են սույն ընթացակարգի հրավերով և գնումներ մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, բացառությամբ Նատալի Ֆարմ ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերի, մասնավորապես փաստաթղթերը կցված չեն եղել, ուստի Նատալի Ֆարմ ՍՊԸ-ին առաջարկվեց ուղարկել բացակա փաստաթղթերը, և նա 1-օրյա ժամկետում ներկայացրեց դրանք:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

## III. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

**(Մ. Խաչատրյան)**

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին <<Արթիկի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ում, հասցե՝ ք. Արթիկ Բաղրամյան 2:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

հանձնաժողովի նախագահին փոխարինող՝ Մարինե Խաչատրյան

հանձնաժողովի անդամ՝ Նարինա Վարդանյան

հանձնաժողովի քարտուղար՝ Սաթենիկ Շախպազյան